

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 19-Ի
ԹԻՎ 815-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԻԾ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«—» «————» 2021 թվականի №----Ն

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ
19-Ի ԹԻՎ 815-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի «Նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական թարգմանության իրականացման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 29-ի N 1245-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 815-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի՝

1) 5-րդ կետում՝ «, ռուսերեն և ֆրանսերեն» բառերը փոխարինել «և ռուսերեն» բառերով, իսկ «Նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն)» բառերից հետո լրացնել «Հայաստանի Հանրապետության արդարադատության Նախարարության թարգմանությունների կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության միջոցով (այսուհետ՝ Թարգմանությունների կենտրոն)» բառերը,

2) 9-րդ և 16-րդ կետերում՝ «համարը» բառից հետո լրացնել «թարգմանությունը կատարած մարմնի անվանումը» բառերը, «Հայաստանի Հանրապետության արդարադատության Նախարարի» բառերը փոխարինել «Թարգմանությունների կենտրոնի տնօրենի» բառերով, իսկ «Նախարարության կնիքը» բառերը փոխարինել «Թարգմանությունների կենտրոնի կնիքը» բառերով,

3) 11-րդ կետում «Նախարարության կնիքը» բառերը փոխարինել

«Թարգմանությունների կենտրոնի կնիքը» բառերով:

4) 12-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: